



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 օգոստոսի 2011թ. թիվ 197-Ա

«ՇԻՆԱՐԱՐ» ՊԶ-Ի ԼՈՒԾԱՐՄԱՆ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 22.07.2011թ. թիվ 02/14.23/2883-11 գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Հաստատել «Շինարար» Պետական Ձեռնարկության լուծարման միջանկյալ հաշվեկշիռը 20.07.2011թ. դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատված լուծարման միջանկյալ հաշվեկշիռը ներկայացնել «Շինարար» Պետական Ձեռնարկության լուծարային հանձնաժողովին:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ



Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2011թ. օգոստոսի 2
ք.Վանաձոր